




ԱՍՏԳԻ-ԱՐԵՎԵԼԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԱՂԱՔԱՆԱԿԱՆ ԸՍԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է ԹԻՖԼԻՍԻ 12 դր. վնասման 6 դ. Պարոկա-
տանի օտար քաղաքները 15 դ. վնասման 8 դ. Ռուսաստան 3 րուբ-
լի. վնասման 2 րուբլի. Օտար երկրները 8 ֆունտ. վնասման 5
ֆունտ: Հասցե Teheran Kédaction ASTGH-AREVELAN

«ԱՍՏԳԻ-ԱՐԵՎԵԼԱՆ» խմբագրությունը բաց է ամեն օր բացի կն
Սանկի և սոն օրերն:
Յայտարարություն ընդունվում է ամեն լեզվով. իրաքանչիւր քառին
1 շահի:

ԱՂԳ

Աստղ-Արեւելանի լարգելի բաժանորդ
ներեց կը խնդրէ որ բարեհաճին ի-
նչպէս բաժանորդանալու միջոցով
խմբագրութեան հասցեն. եւ ջանալ
թերթս տարածել. ինչքան կարելի է,
որով թերթիս ազատութեանը նը-
պաստած պիտի լինին:

ԲՈՎԱՆԴԱՅԻԹԻՒՆ

Աստղի բարեկամներին. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ Նամակ համադանից. Նամակ Վի-
րազից. Նամակ Սոյախանից. Նամակ Խո-
բագրութեան Թէհրան. Նամակ Խոյնի-
Պատասխան. Նամակ Եգիպտոսից. Ներ-
քին լուրեր. ՀԵՌԱՅԻՐՆԵՐ. Աստղ Արե-
ւելանի պատասխաններ. Յայտարա-
րութիւններ. ԲԱՆԱԹԱԹԵՐԹԱՆ երկու
խօսք

ԱՍՏԳԻ ԲԱՐԵՎԵԼԱՆԵՐԻՆ

Ընթերցող, պատահէ՛ք բեզ երբէք,
բարեկամիւ, մտերմիւր և կամ թէ ինք
զինքը քու անկեղծ և սրտակից ընկեր
ներկայացնողին, որ եւ գիտողութիւն ա-
նել նորա պակասութեան կամ մի ըն-
թացքի մասին, և անտէ՛ր ես ինչպէս
այդ մտերմիւ կաշուած քու ամենամեղ,
անշահախնդիր գիտողութեան և քննա-
դատութեան գէժ ինչպէս փոխում
իւր գոյնը, մերկանում բարեկամութեան
շաղկիպ, մէկ կողմ թողած իւր անկեղծ
կաշուած բարեկամութիւն, ի որտէ՛ լուզ
ուած քու վրայ կտառի յաճախմանը
գործում և բարձրաձայն բղաւում,
եթէ օտարներն անէին այդպիսի
գիտողութիւններ և քննադատութիւններ,
եւ պիտի արհամարհէին և լուրի, սակայն
իմ բարեկամս ինձ քննադատի, ո՛ր

այդ անտանիքի է:

Ճիշտ այդ վիճակի մէջ է այսօր Աստղ
Արեւելանը իրեն չընդապառող գուրդու-
րող և փափախող անկեղծ բարեկամնե-
րէն իւր շահերն պաշտպանողին:
մի մասի հետ, որոնց շատերն այն գո-
ղափարին են, թէ քանի որ ես Աստղին
բաժանորդ եմ կամ թղթակից, աշխո-
տակից կամ հիմնադիր անգամ, նա ինձ
խաթիր պիտի անի և կամ պակասու-
թիւններն ու աչքահաս գեղձումներն
մասին ծպտուն չպիտի հանի. ախր
չէ՞ որ ասրեկան մի օրինակ Աստղ եւ
եւ անուամբ և չորսն էլ այս ինչ ան-
գերն եմ նսրում. չէ՞ որ նեղութիւնով
ու ժամանակս կորսնցնելով ամսական
մի կտոր եմ գրում և լրեր եմ հասա-
ցում նորան. չէ՞ որ այս ինչ քաղաքի
գործակալութիւնն անելով տարեկան
բաւական փող եմ հասցնում. կամ
վերջուպէս չէ՞ որ տարեկան այսքան
թիւմէն եմ տալիս թերթի հիմնադրու-
թեան, նորա յոռաջողութեան հա-
մար և միևնույն ժամանակ էլ ուր որ նո-
րա անունն է գալիս, տեղի անտեղի շա-
ղկիւ եւ պատուում, ուրեմն նա (Աստղը)
ինչպէս իմ բարիք և նեղութիւններս
մոռանալով տարբարութեամբ սխալ-
ներս ճակատիս պիտի գալիէ, չէ, ես
նրա բարեկամն եմ նա ինձ չպիտի
վիրաւորի և այլն: Այս խօսքերիցն որ-
պէ՛ք լուրս պատիւն ունեցել է Աստղը
նայնիս իւր ամենաշեղծ պաշտպան-
ներեց մէկի բերնից, (որ իւր մի ան-
վայել ընթացքի համար Աստղի համետ
քննադատութեան էր ենթարկել) որը
կտրուած սրտով գանգատում էր, թէ
փող տամ, նեղութիւն կրեմ և քննա-
դատութեան ենթարկուեմ:

Եւ թէ ինչ սխալ գողափարի են
մեր բարեկամներից շատերը փող տանք
և քննադատենք... բարեկամներ, մի
թէ մոռանում էք որ մամուլի և թեր-

թի ներկայիս պարտականութիւնն է
վերջին անաչառութեամբ վերաբերել
հասարակական խնդիրներին, մանաւանդ
երբ այդ վերաբերում է իւր ամենու-
մօտ և անկեղծ մշտնիւրիս. ինչպէս
կարող է մէկը մամուլի անկեղծ համակ-
րող և բարեկամը լինի, երբ նա իւր
անվայել վարք ու բարքով ու անպա-
կառ ընթացքով, հասարակութեան ա-
ռաջ անջնջիլի արատէ բերում իւր սիր-
ցեալ և փափախած մամուլի վրայ
գուցէ հաւատցում է, թէ չնչին ան-
գամագործներով կամ որեւէ գումարով
կարելի է անկեղծ բարեկամ դառնալ
մամուլին. ոչ այդ էլ, սխալից աւելի
բարձր, թերեւս բրէտան յանցանք կա-
րող է համարիլ, որովհետեւ մամուլը
հետեւ, շատ հեռու է կաշտակերութիւ-
նից և նորա կաշտակերութեանը էլ մարդկու-
թեան իրաւունքներ անհաւաք անել, ան-
վատահալ թեան, անհաւատարմութեան և
խաղախութեան անպատեւելի է գրա-
մով կնքել է ուղղւած մամուլի անաչառ-
ճակատը ուստի թող որ Աստղ-Արեւե-
լանի բարեկամները վատահ լինեն որ
թերթիս ուղղութիւն և սկզբունքը
լինելով անաչառութիւն չպիտի խնայէ
մանրամասն քննադատութեան անհե-
լու հասարակութեան վնասող բարք
և քննադատութեան վնասող բարք
ընդունելը, լինի այդ նայն իսկ իւր
թղթակցի, գործակալի, բաժանորդի,
հիմնադիր անգամի եւ ամենաջնջն
պաշտպանի կողմից, որովհետեւ այդ է
մամուլի և թերթի կաշտմը և այդ
անելով բարեբարութիւն է անում իւր
բարեկամներին և պաշտպանում իւր
պատիւը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԱՄԱԳԱՆԻԾ

Աստղ-Արեւելանի 18-րդ համարում
կորագրի համադանից գրած՝ սակայն

զարմացական նշաններով և
ներով լեցուն մի նամակ Ս. Խաչատու-
րեան ստորագրութեամբ սրի պարու-
նական այդ նշանները արգարե շատ
քիչ էր. նամակի միտքը և հոգին ցոյց
տալու համար...

Պ. Նամակագիրը, իւր այդ անկե-
ղաւան նամակովն ուղղւած է նախ հեր-
ել իմ նամակի այն կէտը որով տանել
էի թէ համադանաւանի բողոքական հա-
յերը Ամերիկացի միսիոնարների ազդե-
ցութեան են ենթարկուած անելով թէ
Ջաւադը սուա է ասում և այլն. եւ տ-
ղա անպատեւելի կերպով ամբաստու-
նում է Ջաւադին, կամ ասենք Ջաւադ-
ներին, որպէս ազգի բարօրութիւնը
խանդարող և արնահեղ աղետներին
պատճառ եղող և այլն (?!) Պ. Սա-
հակ, եթէ նախորդ նամակովս առաջ
էի բերել միայն մի էրեխի խօսակցու-
թիւն իբրեւ փոստ ասածին ոչոր ա-
ռաջ պիտի բերեմ նայն իսկ ձեռք, ա-
րածներից մի քանին որ ինքներդ էլ
վկայէք 1890-ին չէր որ մի ամերիկա-
լի օրիւրգի պահանջի, եթէ աւելի պարզն
ասեմ հրամանի առաջ ամենքդ էլ գլուխ
խոնարհելով, միախորհարդ և միա-
ձայն ընդունեցիք Ս. հաղորդութեան
համար գինու փոխարէն օշարակ գոր-
ծածել) ինչ է նշանակում այդ
եթէ ոչ անպայման հազանգութեան
հոգին որ գտել էք դէպ ամերիկացի...
եթէ ոչ, գուք էլ լաւ գիտէք որ այդ
ահագին փոփոխութեան համար Ս.
գիրքը թող չի տալիս և մինչև անգամ
անիծում է փոփոխութիւն աւողին
վատահացում եւ ձեզ, որ եթէ վաղն
Ամերիկացիները ձեզ առաջարկելու ի-
նին որ կերական շարժմ օրւան փո-
խէք, առանց որեւէ դիմադրութեան և
բացադրութիւն հարցնելու պիտի ըն-
դունէք որովհետեւ նախ Ամերիկացի են,
սուրբ և զիտուն... իսկ դուք հաւ-

Հայաստանի գաղթը դեպի իր հայրենի-
հայրը ինչ որ ունէր իւր արժանայի-
շատակ հայրը Արեւելեանումը նստեց-
դին Ջահ: Ժենեբայ իսակ խանը, յուզ-
ած կերպով շնորհակալութիւններ
յայտնեց հայ պատուիրակութեան և
յանուն իր կառավարութեան պատ-
ւիրակութեան յուսադրեց, որ հայե-
րը ինչպէս ամեն ժամանակ աշխատե-
ալուհետեւ վայելած են և պիտի վա-
րելն նոր ընտիր Ջահի Բարձր Հովա-
նուորութեան Ապա պ. Մ. Անանեանց
ժէնեբային ներկայացուց մի երկար հե-
ռագիր եզրագրութիւն հայ գաղթականու-
թեան կողմից, որը ուղարկեց Արեւելե-
անումը Մուզաֆֆուրէդդին Ջահին և
իւրերեք յանուն նոր ժողովրդեան ուր
ժէնեբայը բարեհաճի իւր ստորագրու-
թիւնը դնել այդ հեռագրի տակ թորգ-
ման հանգիստաւորութեան համար, հայ ժո-
ղովրդեան, ախար և ուրախ զգացմանց
և նրա տաճած յոյսերուն. ժէնեբայը
շատ զգացուեցաւ երախտագրութեան
այդ զգացմունքին և պարսիկ գաղթա-
կանութեան ներկայութեամբ պատ-
րասեց հայ ազգի երախտագրութեան
զգացմունքները առ պարսից կառավա-
րութիւնը և հեռագրեր է ուղարկուե-
լով. նոյն օրուան ժամը 7-ին ըստ
Երուսաղեմի ուղարկուեցաւ այդ բարե-
բաւոյնի յոյսերով ներշնչած էր որ
այստեղի, հայ գաղթականութիւնը եր-
բար ստացաւ Վեհափառ Ջահի անփա-
խարհելի կարօտեան լուրը.

(Գը Զարուհակի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Որոմիայից մեզ տեղեկացնում են թէ
«Ճաղրուշա» գետը յարդիւր շրջա-
կայ գիւղերից 25-ը ողողած է թէն
տնծի կորուստ դեռ չի յայտնուել, ըստ
գրամական և նիւթական վնասը
իւրեղ գիւղացիի համար անսահման
է եղել, շատ այգիներ և արտեր
աւերուած են:

Մայիս 27-ին Սալմաստի կողմի-
րում մի արնանոց դէպք է պատահել
այսինքն 40-ի շափ հայեր որ Հայրե-
նեաց արձատրութիւնը փախնելով դի-
մել էին Պարսկաստանի խաղաղ գիւ-
ղը ըստ սահմանադրուել ան-
ցած թէ չէ Թամար աղա քիւրդը
տեղեկանալով քանի հարիւր ձիաւոր-
ներով յարձուկում է խեղճ և անգէն
գաղթականների վրայ ուր գաղթա-
կաններից երեքը զոհուելով և քիւրդ
տաղաններից տասնումէկը սպան-
ւելով կոխը վերջ է ստանում. այդ
պատճառով ինքնապաշտպան գաղթա-
կանները ամբաստանում են իբրեւ
խռովարարներ և ձերբակալում են պար-
կառավարութեան կողմից, սակայն ծըշ-
մարտութիւնը ծածկւած չմնաց որով
և Սալմաստի փոխ դատաւորը ծանո-
թանալով քուն խնդրին և քուրդերի
առաջակային նպատակին իսկոյն հրա-
մայում է հալածւած հայերին տեղ
տալ նոյն տեղում

Շիրազից մեր թղթակիցը տեղե-
կացնում է թէ նահապաղ Շահի հո-
գեանգիտող շքեւ կերպով կատարեց
ուր և ներկայ են եղել պատաւոր
անմիւր: Նոյն տեղից գրում են թէ

տեղի կառավարի շնորհիւ հանդար-
տել է քաղաքի խռովութիւններ և աղ-
մուկը որ առաջ էր եկել նահապաղ
Շահի թղթի պատճառաւ, թէ Վ. Շա-
րալա խանը քանի հազար հեծելա-
գործով և թնդանօթներով պիտի ևր-
թայ շրջակայ վրանաքնակ ցեղերը
հնազանդեցնելու, որոնք սկսել էին
Շիրազ նահանգը ահ ու սարսափ տա-
րածել:

Անցեալ շաբաթ, Հայկազեան զրա-
րոցում տեղի ունեցաւ Շաառիին կըր-
թասիրաց օժանդակ ընկերութեան
առաջին ընդհանուր ժողովը ուր կար-
դացուեց ընկերութեան մի կարծա-
րտ, սակայն լաւ մշակւած կանոնա-
գիրը, որն ուրախութեամբ ընդունեց
ժողովի կողմից: ուրախալի է տեսնել
Շաառիին գիւղի ժողովրդի նման
միաւորների ազգասիրական շար-
ժանները. մենք մեր կողմիցը շնոր-
հակարթիւն յայտնելով Շահնազին
յաջողութիւն կըմաղթենք նաև յիշեալ
ընկերութեանը,

«Արարատ» ամսագիրը պաշտօնապէս
հաստատում է այս օրերս մեր հաղոր-
դած լուրը, որ ազգիս ինհամառ հայ-
րավարը որոշել է պ. միւրոնի օրհնու-
թեան հանդէսը կատարել առաջիկայ
սեպտեմբերի 29-ին, Վաքաֆայ և. Սա-
չի տօնին: Հայաստանեաց ս. եկեղե-
ցու ընդը գաղակները հրապրում են
ներկայ լինելու այդ մեծաշուք հանդի-
սին, որ մեր եկեղեցու ամենանորիս-
կան արարողութիւնն է:

Դավթեճից մեզ հաղորդում են Հե-
տեւեալ բերքը. Անցեալ շաբաթ մի
15 տարեկան հայ աղջիկ, գուրկ հորից
և անամ ախտահար, պարսիկ երիտա-
ւորդի հետ փախաւ և աղաւթից մուշ-
տէիդի տունը որը պատուստանեց թէ 3
յետայ եկել տարել աղջիկան. անցաւ
երկու օրը, ըստ աղջիկի դեռ եւս չէ
վերադարձել:

Նոյն տեղից. Մի սուկայի ոճիւր
որ տեղի ունեցաւ զրաւնից յետոյ, ան-
միջապէս մոռացնել տեղ այդ դէպքը
Հիւսկայի օտարական ուսուցիչներից
մէկը խախտելով մի 20 տարեկան
օրիւրդի կուսութիւնը. պատճառ է
դառնում մի սուկայի ոճիւր: Աղջիկն
արդէն յղացել էր, երբ վերջերս իր
հայրը նկատեց այդ ու սրաւագի իր
պատիւը պաշտպանած լինի. վճռեց
թուճաւորելով սպանել աղջիկան: Վճռ-
եց ու կատարեց: Քաղաքս զղրողեցաւ
ըստ էլ ինչ կարող էին անել. աղջի-
կը արդէն մեռած էր. իսկ ուսուցիչը
անյայտացած քաղաքիցս:

Թաֆրիզում օրերս շատ է խօսուել
թագաժառանգի Թէհրան գնալու մա-
սին:

Ատրպատականի նահանգապետ իւր
շահակութեամբ է Ամին Դովլեան, որ ինչ-
պէս առում են Թաւրէզ կը հասնի
մուհառամի վերջերին:

Սովետաշուք ամսոյս 10-ին, Մու-
հարամի 10-ին, կը պարսիկները կա-
տարում էին իրենց յայտնի կրօնա-
կան ծէսը. Սինի Զիւրդները սկսեցին

ծաղրել և սրահանջել թէ օմարին
կը հայհոյեն, որից առաջացաւ մի մեծ
կռիւ. իսկ կառավարութիւնը ստիպ-
ւած եղաւ միջամտել. երկու կողմից
սպանւած են մի մի հոգի: Զինուորնե-
րին զէնք բաժանեցին և սպասում են
Թաւրիզից քանակի ժամանելուն դու-
թիւնը խիստ կրիտիկական է:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

ԱՍՏԳ-ԱՐԵՎԵԼԵԱՆԻ ՍԵՓԶԱԿԱՆ ՀԵ-
ՌԱԳԻՐՆԵՐ

Մեզ հետագրում են թէ վերջերս
Վանում 5000 հոգի կատարուել են.
Նոյն տեղի Անգլիական Հիւստոսը
սպանուել է:

Մարի Գաղթելը տառնեցիւ ծիա-
ւորներով Մարի Եիմոնին այցելու-
թեան նրկալու ժամանակ ծանապար-
հին սպանուել են քիւրդերից:

Վանի գիւղերից պարսից ժամա-
նագրուիւր փախչող 1000 հոգի հայերը
պաշարւած են քիւրդերից:

Վերջին Հեռագիր

Պարսիցսահմանագրուիւր հասած 1000
ի շափ հայ գաղթականները անխնայ
կոտորուեցին քիւրդ հրապառնակների
ձեռքով:

ԱՍՏԳ-ԱՐԵՎԵԼԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Գահիրէ. Պ. Մ. Ա. ձեր նամակը
ստացանք ձեր ուղեցած թերթերը
մեզ ողորկում են շարունակաբար:

Թէհրան. պ. Կ. Տ. Սարգիսեանց
չենք հասկանում ինչ էք ուզում ասել
խմբագրութեան յանձնարար կողմի-
ցի համար պարտ է նա պա-
տասխանելու իմե՛ յարմար չէ գտնում
հրատարակել խնդրենք ցոյց տալ
որտեղ և ինչպէս կարողացաւ գտնել
կամ տեսնել այդպիսի մի պարտակա-
նութիւն որին դուք անուանում էք
լրագրական օրէնք: Եթէ ամեն մի նա-
մակ կամ գրութիւն հրատարակել կամ
չհրատարակելու համար խմբագրու-
թիւնը պարտաւորուէր պատասխանե-
լու հաւատացէր որ թերթը ծայրէ ի
ծայր պիտի լեցնուէր պատասխաննե-
րով վերջապէս գիտե՛ք որ խմբագ-
րութեան հետամ գրութիւնների հրատա-
րակութիւն կամ լոյս չտալը խմբագ-
րութեան քաղաքական իրաւունքն է ո-
րից իրաւունք չունէ և ոչ մէկ թղթ-
թակից կամ նամակագիր յետ պա-
հանջել իր գրութիւն կամ նրա մա-
սին խմբագրութեան որոշումը:

Հրատարակել
Աստղ-Արեւելեան Ընկերութիւն
Արտօնատէր
Մակար Կ. Մակարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ոմն պ. Մատթէս Գրեգորեանց իմ
անկեղծ բարեկամս եօթն ամիս է մեկ-
նել է Դավթեճից Թէհրան: Հինգ ամիս
է որ ոչ մի լուր չունիմ պարունից,
իւրաքանչեւ Աստղի ընթերցողներից
յայտնել նրա յրտեղ կամ ո՞ր քաղա-
քում լինելն:

Մ. Մամիկեանց.
1---1

AVIS

LE GRAND HOTEL

Le Grand Hotel sis au Khlava
ne Ala-ed-Dowleh vient detre
concède à J. Davidiantz qui a
l'honneur d'aviser l'honorable
Public que les dejeuners et les
diners ainsi que les autres rafrai-
shissements seront servis aux me-
mes conditions et mieux soignés:
l'hotel recevra des pensionnaires
à des conditions avantageuses et
fera tout le possible pour être à
la hauteur de son nom.

Téhéran le 22 Juin 1896

J. Davidiantz

4-3

ՕՐ ՀՆՈՒԹԻՒՆ
ՍՐԲԵԼԱՅՍ ՄԻՒԹՈՆԻ

29-ին ՍԵՓՏԵՄԲԵՐԻ 1896 ԱՄԻ

ՅՈՒՌԻՐ ՏՕՆԻ

ՎԱՐԱԳՆԵՑ Ս. ԻԱԶԻ

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Վեհափառ և

Սրբազանգոյն Կաթողիկոսն ամենայն
Հայոց որոշել է Տեառն յաջորդութեամբ
կատարել հանգիստապէս Սրբալոյս Միւս-
տանի օրհնութիւնը յառաջիկայ Սեպ-
տեմբեր ամսոյ 29-ին, Վարազայ Ս.
խաչի տօնին:

Հայաստանեայց ս. եկեղեցւոյ ամե-
նայն հարգաւոր գաղականք հրաւի-
ւած են ներկայ լինելու, ըստ օրհնակի
բարեխաչաւ նախնեաց, այդ մեծաշուք
հանգիսին, որ մեր Ս. եկեղեցւոյ ա-
մենանորիսկան արարողութիւնն է:
Օր առաջ հրատարակելով այս աւե-
տիւն ի լուր հեռաքակ հայ ժողովրդ
դեան, իխայտ ենք որ Հայոց ՀԵՅ-
ՐԻԷԻ այս առաջին Միւստեօրհնու-
թեան հանգեւր պիտի յորդորէ ջերմե-
ռանդ անձկութեամբ ուխտաւոր ժո-
ղովուրդ Հայոց ի Մայր Եթոռ Ս. Էջ-
միածնի:

Librairie Barneoud

Teheran

Մ. Բառնեուտ գրաւաճառ
Թեհրանում, պատիւ ունի
յայտնելու քե իւր գրաւա-
ճառանոցում գտնուում են
ամեն հասակի և ճաշակի
յարմար գրքեր ամեն լեզ-
ւով, գիտաւորայեւ գաղ-
դիւրեւ. վաշէլազրուքեան
տեսութիւններ և այլն:

Արժեքներն շատ աման
են և ամենքին մատչելի
դիմել վերոյիշեալ գաղիւ-
րեւ հասցիին:

Ջաւահայ տպարան. Թէհրան.